2+2=4
x · y=xy

2020

Տարեկան հաշվետվություն

ԱՅԲ
կրթական
հիմնադրամ

2020-ը՝ նոր հնարավորությունների սկիզբ	5
Կառավարման այբական մոդել	8
Մեր մրցույթները տեխնոլոգիական աշխարհում	10
«Կենգուրուն»՝ արդեն թվանշային	14
Հայերեն առանց սահմանների՝ «Մեղու 2020»	17
Ռոբոտների համաշխարհային օլիմպիադա	22
Ուսանող քիմիկոսների մրցաշար	30
Պատանի քիմիկոսների մրցաշար	33
«Քան» ակադեմիա	37
Արարատյան բակալավրիատ	48
Ֆոնդահայթայթման ուղղությունները	56
Ֆինանսական հաշվետվություն և աուդիտ	72
«Այբ» դպրոց	77
Դիլիջանի կենտրոնական դպրոց	83
Հանրային հաղորդակցություն	92
Աշխատում ենք թիմով ու սիրով	94
Հայացք դեպի 2021	98

2020-Ը՝ ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԿԻԶԲ

2020 թվականի մարտահրավերները եկան ապացուցելու, որ հասարակական կյանքի բոլոր ոլորտները, այդ թվում՝ կրթությունը, պիտի ունակ լինեն արագ արձագանքելու ճգնաժամային իրավիճակներին: «Այբ»-ը, «լավագույն կրթությունը՝ բոլորին» իր նշանաբանին հավատարիմ, համավարակի և պատերազմի ընթացքում միավորեց բարերարների և գործընկերների ամբողջ համայնքը՝ ձգտելով իր բազմաթիվ ծրագրերը հասանելի դարձնել Հայաստանի Հանրապետության և Արցախի բոլոր, այդ թվում ամենահեռավոր բնակավայրերի սովորողներին: Դժվարություններով լի տարում մենք կրկին համոզվեցինք, որ մեր ուժը համայնքի միասնականության մեջ է:

2020-ը նաև հնարավորությունների տարի էր: Կրթության դերն արժևորվեց ավելի քան երբևէ, և գործնականորեն տեսանք կրթության՝ տեխնոլոգիական զարգացմանը համընթաց քայլելու անհրաժեշտությունը: Մեր բոլոր ծրագրերը սրան են վերաբերում: Ես հույս ունեմ, որ մեր մեծ համայնքով կկարողանանք կյանքի կոչել բոլոր նոր ու հավակնոտ նախաձեռնությունները և կրթության առաջընթացը դարձնել մեր ուժը՝ դրա միջոցով վաստակելով խաղաղ ապրելու մեր իրավունքը:

Սոնա Կոշեցյան
«Այբ» կրթական հիմնադրամի գործադիր տնօրեն

Ելնելով ստեղծված իրավիճակից՝ «Այբ» կրթական հիմնադրամի բոլոր ծրագրերն ուղղվեցին ճգնաժամը նորարարական տեխնոլոգիաների միջոցով հաղթահարելուն և այնպիսի կրթական համակարգ կայացնելուն, որն ունակ է ապահովելու կրթական գործընթացների շարունակականությունը: «Այբ»-ի ամենամեծ ծրագրերից մեկը՝ «Քան» ակադեմիայի հայերեն հարթակը, արդեն իսկ ունենալով կրթական նյութերի մեծ շտեմարան և հենց հեռավար կրթության հարմարություններ, թթվածնի դեր կատարեց հեռավար կրթության անցնող հայաստանյան կրթական համակարգի համար: Շատ արագ կողմնորոշվեցին նաև մեր դպրոցներում. «Այբ» դպրոցը և Դիլիջանի կենտրոնական դպրոցն առաջիններից էին, որ սկսեցին իրականացնել հեռավար կրթություն՝ օրինակ ծառայելով մյուս դպրոցների ու անգամ պետական մարմինների համար: Ելնելով համավարակի ստեղծած իրավիճակից՝ «Այբ»-ն առցանց հարթակ տեղափոխեց իր զանգվածային մրցույթներից երկուսը՝ «Կենգուրուն» և «Մեղուն», ամբողջությամբ առցանց անցկացվեց նաև Պատանի քիմիկոսների մրցաշարը:

«Այբ»-ը, հավատարիմ լինելով սոցիալականության իր որդեգրած սկզբունքներին, 2020 թ. շարունակեց Հայաստանում կրթության մեջ մեկենասության ինստիտուտը զարգացնելու իր առաքելությունը: Դրա շնորհիվ համալրվեց «Այբ»-ի կրթաթոշակային ֆոնդը և հնարավոր եղավ լավագույն կրթությունը հասանելի դարձնել բազմաթիվ սովորողների համար՝ անկախ նրանց ֆինանսական վիճակից: Մենք փորձեցինք նաև խթանել համագործակցության նոր մշակույթը Հայաստանում. «Այբ»-ը գտավ գործընկերներ, որոնք անվճար (պրոբոնո) սկզբունքով իրենց ներդրումն արեցին կրթության մեջ:

«Այբ»-ը հավատում է կրթության միջոցով ապագան փոխելու և ամուր ու զարգացած պետության կայացմանն այդ կերպ օգնելու գաղափարին, և մեր ներդրումները դրան են ուղղված: Բայց 2020 թվականին Հայաստանին պատուհասած պատերազմը «Այբ» համայնքին միավորեց հայրենիքի կողքին նաև ֆինանսապես կանգնելու գործի շուրջ. արդյունքում համայնքն իր ընկերների հետ միասին դրամահավաքի շնորհիվ «Հայաստան» համահայկական հիմնադրամին փոխանցեց 125 118 ԱՄՆ դոլար:

Դժվարություններով լի 2020-ը ապացուցեց ևս մեկ անգամ, որ ամենահեռանկարայինը կրթության ոլորտում արվող ներդրումներն են, որոնք թույլ կտան գիտելիքի միջոցով ստեղծել լավագույն ապագան բոլոր սովորողների համար՝ անկախ նրանց սոցիալական վիճակից և երկրում ու աշխարհում տիրող իրավիճակից: «Այբ»-ի բոլոր ջանքերը հիմա և միշտ ուղղված են այս գերակա նպատակի իրականացմանը:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՅԲԱԿԱՆ ՄՈԴԵԼ

«Այբ»-ը հիմնադրամ է՝ ոչ առևտրային, ոչ պետական կազմակերպություն, որը չունի սեփականատերեր, փայատերեր կամ բաժնետերեր:

«Այբ» կրթական հիմնադրամը կառավարվում է հոգաբարձուների խորհրդի կողմից, որն արդեն օրինակելի մոդել է դարձել, քանի որ երաշխավորում է կառավարման փոխանցելիություն, թափանցիկություն և մասնակցայնություն: 2020 թվականին գործող հոգաբարձուների խորհուրդը ընտրվել էր 2019 թ. դեկտեմբերի 12-ին 2 տարի ժամկետով և նորովի կկազմավորվի 2021 թվականի տարեվերջին:

Կառավարման բարձրագույն մարմնում ներգրավված են մարդիկ, որոնք իրենց ուսերին են վերցրել «Այբ» կրթական հիմնադրամի առաքելությանը հասնելու պատասխանատվությունը:

Խորհրդի կազում են՝

Արամ Փախչանյան

նախագահ, ABBYY ընկերության փոխնախագահ, «Այբ» կրթական հիմնադրամի համահիմնադիր, ՀՀ

Արտակ Հովհաննիսյան

EPAM ընկերության գլխավոր տնօրենի տեղակալ, ՌԴ

Աշոտ Մկրտչյան

«Վիզա կոնկորդ գրուպի» նախագահ, Հայաստան, ՌԴ

Լևոն Ղազարյան

անհատ ներդրող, ԱՄՆ

Սամվել Դովլաթյան

«Մելինեթ» ՍՊԸ-ի հիմնադիր, ՀՀ (մինչև 2020 թ. դեկտեմբերի 2-ը)

Դավիթ Յան
(ներկայացուցիչ՝ **Գագիկ Գրիգորյան**)

ABBYY, iiko, Platius ընկերությունների հիմնադիր, «Այբ» կրթական հիմնադրամի համահիմնադիր, ԱՄՆ

Կարեն Մուսաելյան

HiQu Capital ընկերության հիմնադիր, «Այբ» կրթական հիմնադրամի համահիմնադիր, ԱՄՆ

ՄԵՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԸ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Մենք պարտավոր ենք մեր երեխաների կրթությունը դարձնել ճկուն և ժամանակի պահանջներին համահունչ: Այսօր ամբողջ աշխարհին է վերափոխել կրթության մոդելը, «Այբ» կրթական հիմնադրամը՝ նույնպես՝ բոլորին հասանելիություն ապահովելու ակնկալիքով: Հենց այդ նպատակով մեր գործընկերների հետ միասին մենք ստեղծեցինք միջավայր ու պայմաններ, որոնցում յուրաքանչյուր երեխա կարող է առանց որևէ սահմանափակման մասնակցել մրցույթներին ու միաժամանակ զարգացնել համակարգչային հմտությունները:

«Այբ» կրթական հիմնադրամը «Կենգուրու» և «Մեղու» մրցույթներն առաջին անգամ անցկացրեց առցանց՝ մաթեմատիկայի և հայոց լեզվի սիրահարներին ուրախացնելով համավարակի անորոշ օրերին:

Համավարակի պատճառով անհնարին եղավ դպրոցներում կազմակերպել զանգվածային դպրոցական մրցույթները, սակայն թվանշային տեխնոլոգիաների, մասնավորապես՝ մեր նոր կրթական հարթակի միջոցով երեխաները հնարավորություն ստացան մասնակցելու «Կենգուրուին» և «Մեղու»-ին: Մասնակցեցին նաև Արցախի երեխաները՝ չնայած արցախցիներին բաժին ընկած մեծագույն փորձությանը՝ պատերազմին: Առաջին անգամ անցկացվեց Ուսանող քիմիկոսների մրցույթը՝ այսպիսով դառնալով «Այբ» կրթական հիմնադրամի առաջին նախագիծը բուհական համակարգում: Իսկ Պատանի քիմիկոսների մրցաշարն անցկացվեց առցանց՝ հաջողելով ներգրավել քիմիական համայնքի բազմաթիվ անդամների:

«Կենգուրուն»՝ արդեն թվանշային

Տրամաբանական և հետաքրքրաշարժ խնդիրների աշխարհում ամենասիրելի դպրոցական մրցույթը՝ «Կենգուրուն», առաջին անգամ բերելով թվանշային աշխարհ՝ «Այբ» կրթական հիմնադրամը կրթական նոր հնարավորություններ ստեղծեց Հայաստանի երեխաների համար: Ավելի հասանելի, ավելի բաց, ավելի մասնակցային. սրանք էին մրցույթի նպատակները:

2020 թվականին առցանց «Կենգուրու» մրցույթն ունեցել է ավելի քան 14 000 մասնակից, որոնցից **25**-ը հաղթողի կոչում է նվաճել:

Մաթեմատիկական այս շարժմանը միացել է

427 770

մասնակից Հայաստանի Հանրապետությունից և Արցախից

«Կենգուրուն» Հայաստանում անցկացվում է

2009

թվականից

Ի դեպ, մեր երկիրը՝ ի դեմս «Այբ» կրթական հիմնադրամի, **2023 թվականին կհյուրընկալի «Կենգուրու առանց սահմանների»** միջազգային ընկերակցության տարեկան գագաթնաժողովը, ինչը փաստում է մեր երկրում մրցույթի կազմակերպման և անցկացման դրական փորձի և բարձր մակարդակի մասին:

«Կենգուրուի» պատմությունը Հայաստանում

Կենգուրու 2020

Գրիգորի Արտազյան

Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոցի շրջանավարտ

Գրիգորին երրորդ դասարանից ամեն տարի մասնակցում է «Կենգուրու» մրցույթին, սիրում է մաթեմատիկան: Կարծում է, որ առաջին առցանց «Կենգուրուն» շատ նորարար էր և օգնում էր բավականին ժամանակ խնայել:

Քանի որ միշտ խանդավառված եմ եղել «Կենգուրուով» և մաթեմատիկայով, այդ սիրով էլ ֆիզմաթ. դպրոց եմ գնացել: «Կենգուրուն» կյանքի հետ կապված իրական խնդիրներ լուծելու մասին է: Այն ավելի հետաքրքիր է դարձնում կյանքը. մեր շրջապատում տրամաբանական այնքա՛ն շատ բաներ կան մաթեմատիկայի հետ կապված: Շատ եմ սիրում տրամաբանական, վերլուծական մտածողությունը, որն էլ հենց սովորեցնում է «Կենգուրուն»: Այժմ, տարբեր համալսարաններ դիմելուց բացի, կամավորական աշխատանքով եմ զբաղված: SAT թեստ եմ դասավանդում երեխաներին, ինչպես նաև հետաքրքրված եմ «Կենգուրու» մրցույթի վիճակագրական տվյալներով, որոնց հիման վրա շատ հետաքրքիր հետազոտություններ կարելի է անել:

Կենգուրու 2020

Ռուբեն Գյագունց

Տեղ գյուղի Ա. Սարգսյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոց, 5-րդ դասարան, «Կենգուրու 2019»-ի և «Մեղու 2018»-ի արդյունքներով լավագույնն էր Սյունիքում: Դարձել է նաև «Կենգուրու 2020»-ի մրցանակակիր և «Մեղու 2020»-ի հաղթող:

Ես ուզում եմ ծրագրավորող դառնալ, իսկ «Կենգուրուն» այդ ճանապարհի մի մասնիկն է: Ես մաթեմատիկական այս մրցույթը շատ եմ սիրում, քանի որ մտածելու առիթ է տալիս, զարգացնում տրամաբանությունը: Ուսուցչուհիս լրացուցիչ առաջադրանքներ է բերում իր հետ, որպեսզի ավելի շատ մտածենք և պատրաստվենք մրցույթին: Որպես մրցանակակիր առաջին անգամ մայրաքաղաքում հետաքրքիր այցեր ու հանդիպումներ ունեցա: Մեծ տպավորություններ ունեմ, հատկապես «Զանգակ» հրատարակչության տպարանից. հայտնվել էի գրքերի աշխարհում՝ զանազան գրքեր, արկածներ: «Կենգուրուի» առաջադրանքները և՛ հեշտ են, և՛ բարդ: Սակայն ինձ գրավում է այն, որ առաջադրանքները ծրագրային-դասագրքային չեն, ավելի շատ կապված են տրամաբանության և մտածելու հետ: Իմ կարծիքով՝ մաթեմատիկայի մյուս մրցույթներից «Կենգուրուն» հենց դրանով է տարբերվում. առաջադրանքներն ավելի բազմազան են և հետաքրքիր:

Կենգուրու 2020

Լարիսա Հակոբյան

Ստեփանակերտ, Հ. Թումանյանի անվան թիվ 9 դպրոց, 5-րդ դասարան, «Կենգուրու 2020»-ի մրցանակակիր

«Կենգուրուն» շատ եմ սիրում, միշտ փորձում եմ մասնակցել՝ տրամաբանությունս, միտքս զարգացնելու համար: Որոշեցի այս անգամ էլ փորձել ուժերս և մասնակցեցի առաջին առցանց «Կենգուրուին»: Նույնիսկ եթե տեղ չզբաղեցնեմ, միևնույն է, ուրախ եմ, որ մասնակցեցի, որ սխալներս հասկանամ ու կատարելագործեմ գիտելիքներս:

Լարիսան պատերազմի հետևանքով տեղափոխվել էր Երևան և ապագայի հետ կապված շատ երազանքներ ունի: Նա ցանկանում է բժշկուհի դառնալ: «Ուզում եմ բժշկուհի դառնալ, որովհետև բժիշկներն օգուտ են տալիս մարդկությանը: Կիմանամ, որ իմ աշխատանքը կօգնի զինվորներին: Մի քանի գիրք եմ բերել հետս, պարապում եմ տանը: Անկախ նրանից, թե ինչ է կատարվում, մարդ պետք է աշխատի ու զարգացնի իր գիտելիքները»,- ասում է արցախցի Լարիսան: Նա երազում է նաև սեփական շախմատի դպրոցն ունենալ. Ստեփանակերտում շախմատի հանրապետական մրցաշարում մինչև 10 տարեկան աղջիկների խմբում գրավել է առաջին հորիզոնականը:

Հայերեն առանց սահմանների՝ «Մեղու 2020»



«Մեղու 2020» հայերենի մրցույթը նույնպես անցկացվեց առցանց՝

օգտագործելով «Կենգուրուի» ժամանակ փորձարկված հարթակը և միավորելով հայալեզու մանուկներին թե՛ Հայաստանից, թե՛ սփյուռքից: Մայրենին բոլոր հայերին միավորող կամուրջն է, այդ իսկ պատճառով «Մեղուն» անկցացվում է նաև սփյուռքի հայախոս երեխաների համար՝ նրանց մոտեցնելով հայոց լեզվին և հետաքրքրություն առաջացնելով հայոց լեզվի ուսումնասիրության հանդեպ: «Մեղու»-ի հայապահպան առաքելությունը՝ որպես երեխաների համար հայոց լեզուն առավել գրավիչ ու սիրելի դարձնելու միջոցի, նաև ներկայացվել է «Հայաստան-սփյուռք համագործակցությունը COVID-19-ի պայմաններում» առցանց աշխատաժողովներում: Առցանց «Մեղու»-ին մասնակցել է ավելի քան 4000 երեխա, այդ թվում՝ սփյուռքից:

«Մեղու 2020» մրցույթն ունեցել է 6 հաղթող:

«Այբ»-ի մրցույթների նոր գործընկերները

Uteach կրթական հարթակն առաջինն արձագանքեց համավարակի պատճառով կրթության ոլորտում առաջացած խնդիրներին և հնարավոր դարձրեց «Կենգուրու» և «Մեղու» մրցույթների առցանց անցկացումը՝ հավատարիմ մնալով իր «կրթություն առանց սահմանների» նշանաբանին: Uteach-ի՝ «Այբ»-ի հետ հանուն կրթության համագործակցելու փորձը մասնավոր հատվածի կորպորատիվ պատասխանատվության լավ օրինակ է:

ArLoopa հավելվածը բարձրագույն տեխնոլոգիաների շնորհիվ հնարավորություն տվեց մեր «Կենգուրուին» շփվելու երեխաների հետ վիրտուալ իրականության մեջ և դառնալու սովորողների սիրելի կրթական ուղեկիցը:

VLUME-ը հայկական ամենամեծ և առաջատար թվանշային գրադարանն է, որն «Այբ»-ի հետ համատեղ երեխաներին օգնում է հարստացնելու գիտելիքները նաև թվանշային աշխարհում՝ թույլ տալով օգտատերերին կարդալ և լսել սիրելի գրքերը և՛ համակարգչով, և՛ հեռախոսով ու, ամենակարևորը, հայերենով: VLUME-ն անվճար առցանց բաժանորդագրություն տրամադրեց «Մեղու» հայերենի մրցույթի բոլոր մասնակիցներին՝ խրախուսելով նրանց միշտ մնալ հայերենին հաղորդակից:

DATAMOTUS

Հետազոտական նոր հարթակ «Դեյթամոտուսի» հետ

2020 թվականի սեպտեմբերին «Դեյթամոտուս» ընկերության հետ համատեղ գործարկվել է «Այբ»-ի մրցույթների կրթական հետազոտական առցանց հարթակը՝ լրացնելով կրթական ոլորտում հետազոտական ռեսուրսների և գործիքների պահանջարկի բացը: «Այբ» կրթական հիմնադրամն արդեն 10 տարի է, ինչ Հայաստանի Հանրապետության և Արցախի հարյուր հազարավոր դպրոցականների համար կազմակերպում է զանգվածային մրցույթներ և տարիների ընթացքում կուտակել է տվյալների մեծ ու ընդգրկուն շտեմարան, որը կարող է օգտագործվել կրթական ոլորտի հետազոտությունների համար:
Հարթակում ներկայացված են «Կենգուրու», «Մեղու» և «Ռուսական արջուկ» մրցույթների վերլուծական տվյալները: Այդ երեք մրցույթների արդյունքների համեմատությունները նոր հետազոտական վարկածներ առաջ քաշելու և հետագայում տվյալների հիման վրա եզրահանգումների գալու մեծ հնարավորություններ են տալիս:

Սերոբ Խաչատրյան
կրթության փորձագետ

«Այբ»-ի մրցույթները ոչ ստանդարտ մրցույթներ են. կա բավականին տարբերություն մեր դպրոցական ծրագրի և այս մրցույթների առաջադրանքների միջև, որոնք ավելի շատ տրամաբանության, ստեղծագործ մոտեցման վրա են հիմնված, և, այս իմաստով, կարծում եմ, կրթության քաղաքականություն մշակողներին այս տվյալների հարթակը շատ հետաքրքիր պատկեր կարող է տալ:

#Հաղթելուենք ստեղծելով

WRO
WORLD ROBOT OLYMPIAD
Rostelecom

WHIZ
CODE
ACADEMY

WRO™
WORLD ROBOT OLYMPIAD

Ռոբոտների համաշխարհային օլիմպիադա

2020 թվականին Ռոբոտների համաշխարհային օլիմիադիայի (ՌՀՕ) ազգային փուլն անցկացվեց նոր ու աննախադեպ՝ հիբրիդային ձևաչափով՝ առցանց և դեմառդեմ: ՌՀՕ-ի հայաստանյան մրցաշարի այս տարվա կարգախոսն էր «Հաղթելու ենք ստեղծելով. մեր երկրին ինժեներական միտք է պետք» շեշտելով Հայաստանում ռոբոտաշինության ու բնագիտական առարկաների՝ որպես առաջնահերթ ուղղություն սահմանելու անհրաժեշտությունը:

Միջոցառումը միավորել էր ռոբոտաշինությամբ և Հայաստանի տեխնոլոգիական ապագայով հետաքրքրված, մեծ ճանաչում ունեցող մարդկանց, այդ թվում՝ «Այբ»-ի հիմնադիր և հիմնադրամի ՀԽ անդամ Դավիթ Յանին:



ՌՀՕ-ն դպրոցներում ռոբոտաշինության, ծրագրավորման, ճարտարագիտության դասավանդումն ու ուսուցումը, միջազգային հեղինակավոր մրցույթներում ու օլիմպիադաներում հայ աշակերտների ներգրավումը խթանող մրցույթ է: **Մասնակցող թիմերը նախագծում ու կառուցում են ռոբոտի մոդել, որը պետք է կարողանա իրական խնդիրներ լուծել:** 2020 թվականի մրցույթում բոլոր առաջադրանքները վերաբերում էին կլիմայական խնդիրներին. ռոբոտները պետք է կլիմայական տարբեր խնդիրներ լուծեին և նվազեցնեին մարդկային կորուստները՝ կատարելով տարբեր բարդության առաջադրանքներ՝ ըստ տարիքային խմբերի: «ՌՀՕ 2020»-ի բոլոր 85 երկրների ազգային փուլերին և միջազգային փուլին մասնակցել է 7-25 տարեկան 80 000 մասնակից:

Ազգային փուլին մասնակցեց 9 թիմ Երևան քաղաքի տարբեր կրթական հաստատություններից:

«Ֆիզմաթ NGN»՝ *հաղթող թիմ*

«Ռոբոտաշինությունը երկրի զարգացման գործում մեծ դեր կարող է ունենալ: Լավ աշխատելով հնարավոր է ստեղծել ավտոմատացված գործարաններից և սպասարկման կենտրոններից մինչև ռազմական տեխնիկա: Մենք գնում ենք մեր երկիրը զարգացնելու ճանապարհով»:

Հաղթողներ

*Մրցույթի WeDo տարիքային խմբում հաղթող է ճանաչվել **«Շուշի» թիմը (Mind Center կրթական կենտրոն)**, տարրական տարիքային խմբում՝ **«Արարատը» (Whiz Code ակադեմիա)**, կրտսեր տարիքային խմբում՝ **«Ստեփանակերտը» (Mind Center կրթական կենտրոն)**, և ավագ տարիքային խմբում՝ **«Ֆիզմաթ NGN»-ը (Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոց)**: Խնդիրներին ստեղծարար լուծում առաջարկելու համար մրցանակի է արժանացել «Ֆիզմաթ NGN»-ը:*

Rostelecom

Հովանավոր՝ «Ռոստելեկոմ»

«Այբ» կրթական հիմնադրամին մեծ աջակցություն է ցուցաբերում «Ռոստելեկոմ» ընկերությունը՝ 5-րդ տարին անընդմեջ աջակցելով Ռոբոտների համաշխարհային օլիմպիադայի ազգային փուլին:

Հայկ Ֆարամազյան

«Ռոստելեկոմ Հայաստան» ընկերության գլխավոր տնօրեն

“Տարեսկզբից բոլորս դիմակայում ենք մեկը մյուսին հերթագայող փորձություններին, որոնց թիրախում են նաև երեխաները:Այսօր առավել քան երբևէ տեսանելի է, որ մեր երկրին ինժեներական միտք է պետք, իսկ ՌՀՕ-ն այդ ուղղությամբ իրականացվող լավագույն միջոցառումներից է:

«Ռոստելեկոմ» ընկերությունը գործադրում է բոլոր ջանքերը կրթության շարունակականությունն ապահովելու և անհրաժեշտ ուղղություններով նոր հմտություններ ձևավորելու համար: Մենք պետք է անենք ամեն հնարավորը երեխաների շրջանում դեռ վաղ տարիքից գիտության հանդեպ սեր սերմանելու ուղղությամբ: Կրթությունն է բոլոր ասպարեզներում հաղթական ելքի երաշխիքը:”

Գործընկեր՝ «Արմենիա»

«Արմենիա» հեռուստաընկերությունն անվճար հեռարձակել է ՌՀՕ-ն՝ միանալով ռոբոտաշինության շարժմանը Հայաստանում:

2020-ը մեր կրթական ոլորտի համար նույնպես իրադարձային տարի էր: COVID-19 համավարակը չեղարկեց կամ առցանց հարթակ տեղափոխեց բոլոր ծրագրերն ու միջոցառումները:
«Այբ»-ում շարունակում էինք անել առավելագույնը, որ ապահովենք կրթական գործընթացի անընդհատությունը և շարունակականությունը:

5-րդ տարին անընդմեջ «Այբ»-ն իրականացրեց Ռոբոտների համաշխարհային օլիմպիադայի ազգային փուլը: Ամեն տարի ռոբոտաշինության ոլորտի այս կարևոր իրադարձության ժամանակ համախմբվում են տաղանդավոր երիտասարդներ, կրթական տարբեր կենտրոններ և ոլորտի հեղինակավոր ընկերություններ:
2020 թ. մենք որոշեցինք հեղինակավոր մրցույթի ազգային փուլն իրականացնել հիբրիդային ձևաչափով՝ առցանց և առկա: Ձևաչափի ընտրությունը նպատակ ուներ չտարանջատելու երկրպագուներին, մասնակիցներին և մրցույթով հետաքրքրված կազմակերպություններին:

«Արմենիա» հեռուստաընկերությունը բարձր պրոֆեսիոնալիզմով օժտված իր անձնակազմով և իր ժամանակակից տեխնիկական հագեցածությամբ դարձավ մեր նախաձեռնության բացառիկ գործընկերը՝ ապահովելով մրցույթի բոլոր փուլերի բարձրակարգ հեռարձակումը: Մենք դա արեցինք բարձր արդյունավետությամբ և հաջողությամբ:

Համաշխարհային այս մրցույթի հայաստանյան փուլն առաջին անգամ էր անցկացվում հատուկ այդ նպատակով կառուցված ստուդիայում՝ մրցույթի թիմերի ելույթների համաժամ հեռարձակմամբ:
2020 թ. հեռավար կրթության պայմաններում «Այբ»-ն այն առաջամարտիկներից էր, որ կարողացավ մեդիա ոլորտի լավագույն մասնագետների ներգրավմամբ կիրառել նորագույն տեխնոլոգիաները կրթական ոլորտում: Դրա շնորհիվ ռոբոտաշինության մրցույթի անցկացումը դարձավ ոլորտի գլխավոր իրադարձությունը և կարևոր ներդրում հայ պատանիների ինժեներական մտքի զարգացման մեջ:

WHIZ
CODE

թական հիմնադրամ
Bank
ն սեր է

rse

Ուսանող քիմիկոսների մրցաշար

ՄԵՐ ԱՌԱՋԻՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԸ

Առաջին անգամ անցկացվեց Ուսանող քիմիկոսների մրցաշարը, որն արդեն շուրջ 10 տարի իրականացվող Պատանի քիմիկոսների մրցաշարի տրամաբանական շարունակությունն է: «Այբ» կրթական հիմնադրամի նոր ծրագիրն ուղղված է բարձրագույն կրթության ոլորտում տաղանդավոր երիտասարդների բացահայտմանը: Ուսանողական մրցաշարի նպատակն է մեծացնել երիտասարդների հետաքրքրությունը քիմիայի նկատմամբ և նպաստել մեր երկրում գիտության այս ճյուղի զարգացմանն ու քիմիական համայնքի ընդլայնմանն ու ամրապնդմանը:

Մրցաշարին մասնակցել է **5** ուսանողական թիմ: Ուսանող քիմիկոսների առաջին մրցաշարի **հաղթողն է «PR» թիմը**, որի անդամները ներկայացնում էին Երևանի պետական համալսարանն ու Երևանի պետական բժշկական համալսարանը:

Ուսանող քիմիկոսների մրցաշար 2020

Կարին Մարկիդես

Հայաստանի ամերիկյան համալսարանի նախագահ, մասնագիտությամբ քիմիկոս և Շվեդիայի Ուպսալայի համալսարանի քիմիայի և քիմիական ճարտարագիտության ֆակուլտետի ղեկավար

“Քիմիայի շնորհիվ դուք կարողանում եք աշխարհը տեսնել մոլեկուլային մակարդակով և իմանալ, թե ինչպես կարող են մոլեկուլները փոխգործակցել ու նոր բան ստեղծել: Կոչ եմ անում ոչ միայն սիրել ձեր մասնագիտությունը, այլև ամուր պահել կապը միմյանց հետ:”

Գործընկեր

Ուսանող քիմիկոսների մրցաշարում մեր գործընկերն էր Հայաստանի ամերիկյան համալսարանը, որի «Զավեն և Սոնա Ագյան» բնագիտության և ճարտարագիտության ֆակուլտետն էլ հյուրընկալեց մրցաշարը:

Արթուր Նահապետյան

«Կոնվերս Բանկի» բիզնեսի զարգացման գծով տնօրեն

“Վստահ եմ, որ նոր մրցաշարը կդառնա ուսանողների շրջանում ամենասպասված կրթական նախաձեռնություններից մեկը՝ նպաստելով ոչ միայն ուսանողության շրջանում քիմիայի նկատմամբ հետաքրքրության աճին, այլև յուրօրինակ կամուրջ դառնալով նրանց ու պոտենցիալ գործատուների միջև:”

Հովանավոր

ConverseBank

«Այբ» կրթական հիմնադրամի ուսանող և պատանի քիմիկոսների մրցաշարերի աջակցությունն իրականացվում է «Կոնվերս Բանկի» կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրի շրջանակում՝ որպես մասնավոր հատվածի օրինակելի քայլ ի նպաստ գիտությանը: Նախագծերին ուղղված գումարը կազմել է **3 300 000** մլն դրամ:

Պատանի
քիմիկոսների
մրցաշար

Պատանի քիմիկոսների մրցաշար

Պատանի քիմիկոսների մրցաշարը նույնպես անցկացվեց առցանց, և սա չխանգարեց, որ մրցաշարին միանան **200** մասնակից և դիտորդ: Մրցույթը հնարավորություն է տալիս բարձր դասարանի աշակերտներին ամբողջ թիմով փնտրելու և գտնելու այնպիսի քիմիական խնդիրների լուծումներ, որոնք դեռ անլուծելի են: 10 տարի շարունակ մրցաշարը տոն է դառնում քիմիայի ոլորտում՝ միավորելով ՀՀ և Արցախի դպրոցների՝ քիմիա սիրող հարյուրավոր երեխաների, ոլորտի մասնագետների և պատասխանատուների՝ ստեղծելով քիմիայի մեծ և կուռ համայնք:

Պատանի քիմիկոսների մրցաշարը տասը տարիների ընթացքում ունեցել է՝

283 *թիմ*

1415 *աշակերտ*

280 *ուսուցիչ*

Եզրափակիչ անցած թիմերն են՝

«Ադրենալին»
Լեոյի անվան թիվ 65 ավագ դպրոց

«Հերացի»
ԵՊԲՀ «Հերացի» ավագ դպրոց

«Օգանեսոն»
ԵՊԲՀ «Հերացի» ավագ դպրոց

Հովանավորներ

AZAD PHARMACEUTICALS LLC

Պատանի քիմիկոսների մրցաշարի մեր գործընկերն էր «ԱԶԱԴ Ֆարմասյութիքլզ» ՍՊԸ-ն (AZAD Pharma AG), որը շարունակական քայլեր է ձեռնարկում Հայաստանում քիմիան զարգացնելու և նոր մասնագետներ պատրաստելու ուղղությամբ: Նախագծին ուղղված գումարը կազմել է **4 000 000 դրամ:**

PROFHOLOD

Պատանի քիմիկոսների մրցաշարի կազմակերպմանն ու անցկացմանը մեծապես աջակցել է նաև «Պրոֆխոլոդ» ընկերությունը, որը, հիմնվելով համաշխարհային փորձի վրա, ստեղծում է յուրօրինակ նոր ապրանքներ ջերմության կառավարման համար: Նախագծին ուղղված գումարը կազմել է **3 164 590 դրամ:**

ՍՈՎՈՐԻ՛Ր
ՍՏԵՂԾԻ՛Ր ԵՒ
AZAD
CANYON
H2O

Արդեն երկրորդ տարին անընդմեջ մրցաշարի հաղթող է ճանաչվում ԵՊԲՀ «Հերացի» ավագ դպրոցը ներկայացնող «Հերացի» թիմը

Ժաննա Սարգսյան
ժյուրիի անդամ

«10-րդ մրցաշարը որակապես նոր մակարդակ ցույց տվեց: Ուզում եմ իմ ուրախությունը կիսել բոլորի հետ այն աճի համար, որը մենք տեսնում ենք այսօր, այն քայլ առ քայլ նվաճումների համար, որոնց մենք հասել ենք այս տասը տարիների ընթացքում»:

«Հերացի» թիմ

«Մրցաշարի կառուցվածքը մեզ թույլ է տալիս կատարել գիտահետազոտական աշխատանք, որի շնորհիվ նորովի ենք բացահայտում մեզ ծանոթ քիմիական երևույթները և, որ ամենակարևորն է, բացահայտումներն անում ենք մեր իսկ պրպտումների արդյունքում»:

«ՔԱՆ» ԱԿԱԴԵՄԻԱ

Արդեն չորս տարի է, որ «Քան» ակադեմիան Հայաստանում է և արդեն ունի կրթական նյութերի մեծ շտեմարան ու հեռավար կրթության համար հարմարեցված հարթակ: 2020 թվականին «Քան» ակադեմիան «առաջին օգնությունը» ցուցաբերեց հեռավար կրթության անցնող հայաստանյան կրթական համակարգին:

«Ապահովել համաշխարհային մակարդակի անվճար կրթություն բոլորի համար և ամենուրեք» կարգախոսով «Քան» ակադեմիան օգնեց և՛ ուսուցիչներին, և՛ աշակերտներին, և՛ ծնողներին հնարավորինս արդյունավետ կազմակերպելու ուսուցման և ուսումնառության գործընթացը: «Քան» ակադեմիայի հարթակի պահանջարկն ու օգտատերերի քանակը հեռավար կրթության անցման առաջին երկու ամիսներին ավելացել են տասնյակ անգամներ:

2020 թ.-ի ապրիլի տվյալներ՝

օգտատերեր
49 605

դիտումներ
119 000

Ուշագրավ է, որ կայքից կայուն օգտվում է օգտատերերի շուրջ

70%-ը:

«Քան» ակադեմիայի հարթակում

3000-ից
ավելի հայալեզու տեսանյութ

28 000
վարժություն ու հոդված

Գրանցված օգտատերերի թիվը դարձել է
50 000
նախորդ տարվա համեմատ աճելով
300%-ով

Գրանցված սովորողների թիվը դարձել է
26 547
նախորդ տարվա համեմատ աճելով
743%-ով

Մինչ այժմ հանրապետության տարբեր մարզերում «Քան» ակադեմիայի իրականացրած տեղեկատվական այցերը, աշխատարաններն ու վերապատրաստումներն օգնեցին, որ այս հարթակի միջոցով ուսուցիչներն ու սովորողներն առավել սահուն տեղափոխվեն կրթության այլընտրանքային դաշտ:



*2020 թվականին արդեն ունեցանք կայքում գրանցված **5620 ուսուցիչ**, որոնց թիվն **աճել էր 435%-ով**, և նրանց **88%-ը գիտական առարկաների և մաթեմատիկայի հայաստանաբնակ ուսուցիչներ էին:** 2200-ից ավելի ուսուցիչ նաև ավելացել է «Քան» ակադեմիայի ֆեյսբուքյան համայնքում:*

Ժաննա Անդրեասյան

ԿԳՄՍ փոխնախարար

«Այբ» կրթական հիմնադրամն ու մասնավորապես «Քան» ակադեմիայի հայաստանյան հարթակն առաջիններից էին, որ համավարակի պայմաններում արձագանքեցին նախարարության՝ կրթության շարունակականությունն ապահովելու կոչին: Առանձնահատուկ ուշադրության է արժանի «Քան» ակադեմիայի նյութերի համապատասխանությունը կրթական նոր չափորոշիչներին: Կրթական նոր տեխնոլոգիաների կիրառումը և դրանց միջոցով դասավանդման որակի բարձրացումը, կրթական համերաշխությունը հնարավոր են դարձնում մի տեղում կուտակված փորձառությունը և լավ ռեսուրսը տարածել ու տարբեր դպրոցներում բազմապատիկ արդյունք ստանալ:

2020 թվականի սեպտեմբերից ***ԱՄՆ դեսպանատունը միացավ Հայաստանի համար այնքան կարևոր բնագիտական ոլորտի առարկաների ուսումնական նյութերի տեղայնացման գործընթացին՝*** *թույլ տալով մեկնարկել ֆիզիկայի և օրգանական քիմիայի բաժինների տեղայնացման աշխատանքները: Նյութերը տեղայնացվելով համապատասխանեցվում են պետական առարկայական նոր չափորոշչին և համալրում «Քան» ակադեմիայի առարկայացանկը (մաթեմատիկա, արվեստի պատմություն, անգլերենի քերականություն, ձեռնարկատիրություն): Այդ նպատակին է ուղղվել* ***50 000 ԱՄՆ*** *դոլար. արդյունքում Գյումրու հանրակրթական դպրոցներում բնական և ճշգրիտ գիտությունների առարկաներ դասավանդող ավելի քան 40 ուսուցչի և 900 աշակերտի համար կազմակերպվում է աշխատարանների շարք:*

«Քան» ակադեմիան 2020 թվականին

- Կազմվել են ուղեցույցներ դպրոցականների համար՝ հաջակցություն ծնողների և ուսուցիչների, ինչպես նաև կազմակերպվել վեբինարներ մաթեմատիկայի ուսուցիչների համար՝ օգնելով նրանց հնարավորինս արդյունավետ օգտվելու հարթակի տված հնարավորություններից:
- Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչության հետ համագործակցությամբ՝ «Քան» ակադեմիայի կրթական հնարավորությունները և ռեսուրսները ներկայացվել են մայրաքաղաքի դպրոցների՝ այս հարթակով հետաքրքրված տնօրեններին և փոխտնօրեններին:
- Ստեղծվել է առանձին աշխատանքային խումբ շուրջ 150 ուսուցիչների համար, ինչպես նաև հատուկ խումբ՝ մաթեմատիկայի ուսուցիչների համար՝ սկսելով դեսպան ուսուցիչների համայնքի ձևավորման գործընթացը:
- Հասանելի է դարձել համայնքի աջակցության հարթակը, որտեղ շահառուները կարող են ստանալ իրենց հուզող հարցերի պատասխանները:

  «Քան» ակադեմիայի աջակցության կենտրոն
- Պայմանավորվածություն է ձեռք բերվել Արցախում ԿԳՄՍ նախարարության հետ համագործակցությամբ աշխատարաններ իրականացնել Քաշաթաղի դպրոցների ուսուցիչների ու աշակերտների շրջանում. դրանք, սակայն, պատերազմի պատճառով սառեցվեցին՝ հետագայում շարունակելու ակնկալիքով:
- Կազմակերպվել են վեբինարներ՝ ծնողներին օգնելու, որ հմտանան հեռավար կրթության գործիքների կիրառության մեջ (հարթակում գրանցված է 3500-ից ավելի ծնող):
- Տավուշի մարզպետարանի հետ ամփոփվել են «Քան» ակադեմիայի հայաստանյան գրասենյակի՝ 2019 թվականին կազմակերպած 21 աշխատարանները սահմանամերձ համայնքների դպրոցների ուսուցիչների և աշակերտների համար՝ կարևորելով ՀՀ մարզերում հայալեզու որակյալ ու անվճար կրթական նյութերի հասանելիությունը:

Գործընկերներ

«Ռոստելեկոմ» ընկերության հետ համագործակցությամբ «Քան» ակադեմիայի նյութերը հասանելի են դարձել նաև «Ռոստելեկոմի» Hybrid Edu ալիքի եթերում, ինչպես նաև ֆիլմադարանի «Սերիալներ» բաժնի ուսուցողական հարթակում: Այս նախաձեռնության միջոցով համավարակի պատճառով կրթության գործընթացից դուրս մնացած սովորողները, որոնք չունեին համացանցից օգտվելու հնարավորություն, կարողացել են հեռուստատեսության շնորհիվ լրացնել այդ բացը:

«Quality Testing Lab»-ն անվճար աջակցել է «Քան» ակադեմիայի հայերեն կայքի տեխնիկական և որակական ստուգման աշխատանքներին:

Որպես անվճար առցանց հայալեզու կրթական հարթակ՝ «Քան» ակադեմիան ընդգրկվել է Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի հեռավար ուսուցման հարթակների ցանկում:

Ժաննա Ղարդաշյան

Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչության դպրոցական բաժնի պետ

«Հարթակն ամբողջովին անվճար է և հայալեզու, ինչը շատ կարևոր է, քանի որ կան դպրոցներ, որոնք չունեն մեծ հնարավորություններ: Որոշեցինք փորձարկել դպրոցներում այս հարթակը և ունեցանք տնօրեններ, որոնք ցանկացան մասնակցել այս հանդիպումներին: Մեծ պատրաստակամություն կա աշխատելու «Քան» ակադեմիայի հետ. հույս ունենք, որ հետագայում անպայման կընդլայնվի այս համագործակցությունը»:

Ինգա Վարդանյան

Երևանի թիվ 33 հիմնական դպրոցի տնօրեն

««Քան» ակադեմիան բավականին լավ օգնություն է հատկապես ներառական կրթություն իրականացնող դպրոցների և ուսուցիչների համար: Մենք արդեն 2 տարի օգտագործում ենք այս հարթակը: «Քան» ակադեմիան հարմար է նաև դպրոցից ինչ-ինչ պատճառներով բացակայող աշակերտների համար. եթե երեխան չի գալիս դպրոց, տանն էլ կարող է դիտել տեսանյութերը, կատարել առաջադրանքները և թեմայից հետ չմնալ, ինչը, կարծում եմ, շատ կարևոր է: Այս հարթակի շնորհիվ յուրաքանչյուր երեխայի տրվում է իր կրթական պահանջներին և կարողություններին համապատասխան կրթություն: Այդ իսկ պատճառով ես՝ որպես տնօրեն, խրախուսում եմ մեր ուսուցիչներին օգտագործել հարթակը»:

Ռուզաննա Պիպոյան

Գավառի թիվ 3 հիմնական դպրոցի մաթեմատիկայի ուսուցչուհի

««Քան» ակադեմիայի շնորհիվ աշակերտները հնարավորություն ունեն հանձնարարված նյութերին ծանոթանալու իրենց հարմար ժամերին և դիտելու տեսանյութերն առանց որևէ ահմանափակման: Թե՛ դասարանում և թե՛ առցանց ուսուցում իրականացնելիս կարողանում ենք ավելի շատ ժամանակ տրամադրել կարողությունների և հմտությունների զարգացմանը, ինչի արդյունքում ձևավորվում է ինքնակառավարվող սովորող: Եվ ամենակարեւորը՝ «Քան» ակադեմիան մոտիվացնում է աշակերտներիս»:

Նանե Վարդանյան

«Քան» ակադեմիայի կամավոր, Վրաստանի New School միջազգային դպրոցի 11-րդ դասարան

Նանեն կամավոր է «Քան» ակադեմիայում՝ հասարակությանն օգտակար լինելու համար, քանի որ, օգտվելով այս հարթակի անգլերեն նյութերից, հասկացել է, թե ինչքան մեծ է որակյալ հայալեզու հարթակ ունենալու կարիքը Հայաստանում:

««Քան» ակադեմիայում թարգմանություն եմ անում, զուգահեռ ուրիշ կամավորական աշխատանք էլ եմ անում՝ գիտությունից մինչև սպորտ. ես ինձ փորձում եմ տարբեր մասնագիտություններում ու որպես ավագ դպրոցի աշակերտ՝ այդպիսով հասկանում եմ նաև, թե ինչն է ինձ ավելի շատ դուր գալիս: Ուղղակի հրաշալի զգացողություն է, երբ հասկանում ես, որ ինչ-որ երեխա, իր տանը նստած, սովորելու է «Քան» ակադեմիայի օգնությամբ, իսկ այդ նյութը դու ես թարգմանել հայերեն»:

Դոնարա Գրիգորյան

Ուրցաձորի միջնակարգ դպրոցի փոխտնօրեն

Վաղուց եմ ծանոթ «Քան» ակադեմիային: Նյութերից օգտվում էի թե՛ որպես ուսուցիչ՝ ինքնակրթվելու համար, և թե՛ որպես ծնող: Երբ հայտարարվեց արտակարգ դրություն, ես հեռավար կրթությանը հատուկ պատրաստվելու կարիք չունեի, քանի որ նախկինում էլ էի օգտվել «Քան» ակադեմիայի նյութերից: Ներգրավեցի աշակերտներին, և սկսեցինք շատ արագ աշխատել: Աշակերտները սիրում են «Քան» ակադեմիան: Առաջին խթանող գործոնը խաղային մոտեցումն է. եթե սխալվում են, կարող են էլի գրել, հնարավորություն կա ևս մեկ անգամ փորձելու, շտկելու: «Քան» ակադեմիան իմ աշխատանքը բավականին հեշտացնում է: Երկրորդը՝ շատ եմ հավանում նաև առաջադրանքները, քանի որ ցանկացած բարդության առաջադրանք կարող ես գտնել աշակերտներիդ համար: Մյուս ուսուցիչներին ևս շատ եմ ոգևորում օգտվելու «Քան» ակադեմիայից. այն իսկապես լավագույն օգնությունն է այս օրերին:



Անահիտ Մանուկյան | ուսուցիչ

«Քան» ակադեմիայից օգտվող ակտիվ ուսուցիչներից է, ունի առցանց դասարան և կարծում է, որ «Քան» ակադեմիայի հետ շատ արդյունավետ է կազմակերպել ուսուցումը:

«Կայքն ամբողջովին հայալեզու է և համացանցի մեծ ծածկույթ չի պահանջում. քիչ մեգաբայտերով էլ կարող են օգտվել կայքից: Եվ քանի որ երեխաների մեծ մասը չունի համակարգիչ, շատ հարմար է սովորել հեռախոսով և նաև հեռախոսային հավելվածով: Կայքը նաև շատ է տրամադրում սովորելու: Երեխաները շատ են ուրախանում մրցակցությունից. այս մեկն ունի այսքան երկնաքար, մյուսը՝ այնքան: Ես սկզբից վախենում էի այս մրցակցությունից, սակայն պարզվեց, որ այն իսկապես շատ է շահադրդում: Յուրաքանչյուր աշակերտ միայն իր գնահատականն է տեսնում և դիտարկում. այդպիսով չեն կաշկանդվում երեխաները, եթե հանկարծ սխալվում են: Շատ կարևոր է անհատական մոտեցումը: Կարող ես տեսնել յուրաքանչյուր աշակերտի առաջադիմությունը, բացերը, նրանց անհատական պատմությունը: Դրանից հետո յուրաքանչյուրին անհատապես ուղարկում եմ իրենց անհատական առաջադրանքներն ըստ այդ արդյունքների: Ծնողներից ոմանք ևս սկսել են սովորել «Քան» ակադեմիայի հետ՝ լրացնելով երիտասարդ տարիքում բաց թողածը»:

Khan Academy Armenia

ԱՐԱՐԱՏՅԱՆ
ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ

Արարատյան
բակալավրիատ

Արարատյան բակալավրիատը շարունակում է աշակերտների առաջ դռներ բացել դեպի աշխարհի լավագույն համալսարաններ: Արդյունքներն իհարկե ավելի մեծ ու համատարած կարող էին լինել, եթե չկասեցվեր պետության հետ համագործակցությամբ ու համաֆինանսավորմամբ իրականացվող Կրթության գերազանցության ազգային ծրագիրը, որի շրջանակում 2018 թվականի սեպտեմբերից ՀՀ և Արցախի բոլոր դպրոցներում աստիճանաբար պետք է ներդրվեր միջազգային ճանաչում ունեցող «Արարատյան բակալավրիատ» ծրագիրը: Ծրագիրը որակական նոր նշաձող է սահմանել և ստեղծել նոր իրականություն. մենք լիահույս ենք, որ այս բացառիկ ծրագրից օգտվելու հնարավորություն կունենան բոլորը:

Դան Բրեյ

Քեմբրիջի համալսարանի Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոն

Մենք հաջողությամբ ծրագիր իրականացրինք միասին: Աշխատանքը բարդ էր ու մարտահրավերային, բայց «Այբ»-ը երբեք զիջումների չէր գնում աշխատանքի որակի հետ կապված հարցերում: Մենք սերտորեն, շատ բաց և համագործակցային ոգով աշխատեցինք իրար հետ, և մեր մշակած գնահատումները միջազգայնորեն ճանաչված են և լրացնում են այն հիանալի աշխատանքը, որը կատարում է «Այբ»-ը՝ դպրոցների, ուսումնական ծրագրի և ուսուցիչների վերապատրաստման միջոցով:

Cambridge Assessment International Education

«Այբ»-ը շարունակում է աշխատանքը ԱԲ-ի ուսուցիչների հետ

«Այբ» կրթական հիմնադրամն «Այբ» դպրոցի հետ համատեղ, առցանց և առկա եղանակներով, անցկացրել է Արարատյան բակալավրիատի դպրոցների բնագիտական առարկաների (ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն) ուսուցիչների և լաբորանտների համար գործնական դասեր վարելու հագեցած վերապատրաստումներ: Գործնական դասերը նախաձեռնվել են կարիքի գնահատման հիման վրա, քանի որ ավագ դպրոցները ստացել են բավականին շատ լաբորատոր սարքավորումներ ու գույք, բայց ո՛չ բոլոր դպրոցներում էին պատրաստ՝ գործնականորեն արդյունավետ կիրառելու այդ միջոցները: Վերապատրաստումներն օգտակար էին բոլոր ուսուցիչների համար, ինչը փաստում է, որ «Այբ»-ը շարունակում է ԱԲ-ի ուսուցիչների կողքին լինել՝ նրանց տալով անհրաժեշտ հմտությունները ստանալու հնարավորություն:

Այծեմնիկ Հարությունյան

վերապատրաստումների մասնակից, Վայքի ավագ դպրոցի քիմիայի ուսուցիչ

“Այժմ սարքավորումները կան, բայց քանի որ տարիներ շարունակ ուսուցիչները գործնական աշխատանքներ իրականացնելու հմտություններ չեն զարգացրել, բնականաբար նրանք նոր վերապատրաստման կարիք իրոք ունեն: Կարծում եմ՝ սա բավականին օգտակար կլինի բոլոր ուսուցիչների համար, և նրանք իրենց հետ կտանեն շատ լավ հմտություններ և նոր ձևավորված լաբորատորիաներում արդեն կկարողանան աշակերտների հետ շատ ավելի հաջող գործնական աշխատանքներ անցկացնել:”

ԱԲ-ի նոր առարկա՝ տեսողական արվեստ

2020 թվականից ԱԲ-ի առարկաների շարքը համալրվել է ևս մեկով՝ «ԱԲ-ի տեսողական արվեստ» անվանմամբ: Առարկայի նպատակն է հնարավորություն տալ իրենց կրթությունն արվեստի բնագավառում շարունակել ցանկացողներին ստանալու միջազգային չափանիշներին համապատասխան գիտելիքներ և տեխնիկական հմտություններ գծանկարի և գունանկարի տարբեր ժանրերում, կարողանալու իրականացնել թեմայի ուսումնասիրություն, տեքստային վերլուծություն և ինքնուրույն հետազոտություն՝ ուսումնասիրելով արվեստի տարբեր ուղղություններ, ոլորտներ, արվեստագետների ստեղծագործություններ, համեմատելով սկզբունքային մոտեցումները և գալով համապատասխան եզրահանգման:

ԱԲ-ը ճանաչող համալսարանների ցանկն ընդլայնվում է

Մեծ թափով շարունակվում է Արարատյան բակալավրիատի միջազգային ճանաչումն աշխարհում: ԱԲ-ի հավաստագիրը ճանաչող համալսարանների թիվն արդեն հասել է **97**-ի:

16 *համալսարան ավելացել է 2020 թվականին՝ ընդլայնելով Արարատյան բակալավրիատի աշխարհագրությունը:*

ԱՄՆ

- Օրալ Ռոբերտսի համալսարան
- Սան Ֆրանցիսկոյի համալսարան
- Հոֆստրայի համալսարան
- Ֆլորիդայի համալսարան
- Չարլստոնի քոլեջ
- Բոստոնի Էմերսոն քոլեջ
- Ամերիկյան համալսարան Փարիզում

Միացյալ Թագավորություն

- Դերբիի համալսարան
- Ստաֆորդշիրի համալսարան
- Թիսայդի համալսարան
- Ֆալմութի համալսարան
- Բրունելի համալսարան, Լոնդոն

Իսպանիա

- Մադրիդի Կառլոս III համալսարան

Ֆրանսիա

- Գրենոբլի կառավարման դպրոց

Իտալիա

- Սուրբ Սրտի կաթոլիկ համալսարան

Նիդեռլանդներ

- Ամստերդամի Կիրառական գիտությունների համալսարան

Արարատյան բակալավրիատի հավաստագրերը

2020 թվականին, չնայած համավարակի ստեղծած աննախադեպ և մարտահրավերային պայմաններին, ԱԲ-ի առարկաներ ուսումնասիրող բոլոր աշակերտներին շնորհվեցին ԱԲ-ի հավաստագրեր:

Հավաստագիր ստացավ **131** աշակերտ

որոնցից **69**-ը՝ **12-րդ** դասարանցի

իսկ **62**-ը՝ **11-րդ** դասարանցի

Հավաստագրերում արտացոլված գնահատականները հաշվարկվեցին այլընտրանքային մեթոդով, որը մշակվեց և կիրառվեց Քեմբրիջի գնահատման կենտրոնի հետ համատեղ՝ միջազգային լավագույն փորձին համապատասխան՝ պահպանելով գնահատականների համարժեքությունը մյուս տարիների գնահատականներին:

Մեր շրջանավարտներն ընդունվել են ՀՀ և Արցախի լավագույն համալսարաններ՝
Հայաստանի ամերիկյան համալսարան, Հայաստանի ֆրանսիական համալսարան, Երևանի պետական համալսարան, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, Երևանի պետական բժշկական համալսարան, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան և Արցախի պետական համալսարան:

2019-2020 բուհական ընդունելություն



Տեղական	16%
ԵՊԲՀ	16%
ՀՖՀ	16%
ԵՊՀ	16%
ՀԱՀ	34%
ՃՇՀԱՀ	9%
ՀԱՊՀ	1%
ՀՊՏՀ	1%
Արցախ	1%
Միջազգային	9%

Արարատյան բակալավրիատի ինը աշակերտ ընդունվել է աշխարհի լավագույն բուհեր՝

Սան Դիեգոյի Կալիֆոռնիայի համալսարան, Լիդսի արվեստի համալսարան, Ռուսաստանի Դաշնության Կառավարությանը կից ֆինանսական համալսարան, «Էկոնոմիկայի բարձրագույն դպրոց» ազգային հետազոտական համալսարան, Լոնդոնի «Քինգս» քոլեջ, UWC Կանադա, Մանչեստրի համալսարան, Լոնդոնի համալսարանական քոլեջ, Կոլորադոյի համալսարան:

ՖՈՆԴԱՀԱՅԹԱՅԹՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սոցիալական նախագիծ կրթության ոլորտում

«Այբ» կրթական հիմնադրամի առաքելությունը լավագույն կրթությունը հնարավորինս շատ երեխաների հասանելի դարձնելն է: Հիմնադրամը, հավատարիմ մնալով իր այս նպատակին, ֆինանսական աջակցություն է տրամադրում երեխաներին որակյալ կրթության համար՝ ելնելով նրանց սոցիալական վիճակից: Այդպիսով՝ «Այբ» կրթական հիմնադրամը եզակի կառույց է, որը, լինելով ոչ պետական, սոցիալական մեծ նախագիծ է իրականացնում կրթության ոլորտում:

2020 թվականին հիմնադրամը 51 984 861 ՀՀ դրամ է փոխանցել «Այբ» ավագ դպրոցին՝ աշակերտների կրթության վճարի փոխհատուցման համար: Կրթաթոշակային ֆոնդը ձևավորվում է անհատների, առևտրային կազմակերպությունների և այլ հիմնադրամների նվիրատվություններից:

2019-2020 ուսումնական տարում փոխհատուցվել է

ուսման վարձ

- **28**-ը մարզային աշակերտներն են, որ անվճար են սովորում
- **123**-ը ստանում է ֆինանսական աջակցություն

2020-2021 ուսումնական տարում փոխհատուցվել է

ուսման վարձ

- **12**-ը մարզային աշակերտներն են, որ անվճար են սովորում
- **129**-ը ստանում է ֆինանսական աջակցություն

Հաջողության ճանապարհը սկիզբ ունի

«Այբ» ավագ դպրոցի աշակերտների 86%-ը ստանում է կրթաթոշակ

Սիրարփի Ղասաբյան

Սիրարփին «Այբ» դպրոց առաջին ընդունվածներից է 2011 թվականին, երբ դպրոցի շենքն անգամ դեռ պատրաստ չէր:

“Առաջին օրից, որ եկանք դպրոց ու ծանոթացանք հիմնադիրների, բարերարների հետ, զարմացել էինք, որ մեզ՝ 14 տարեկաններիս, մեծի տեղ էին դնում, շփվում էին մեզ հետ հավասարի պես: Միևնույն ժամանակ «Այբ»-ում մենք սովորեցինք լինել կարգապահ ու պատասխանատու, չվախենալ ծանրաբեռնվածությունից ու նոր մարտահրավերներից: Երևի դա նաև նպաստեց, որ համալսարան ընդունվելու հենց առաջին տարին սկսեցի աշխատել: Երբ ավարտեցի, արդեն 4 տարվա աշխատանքային փորձ ունեի տարբեր ընկերություններում ու վստահություն, որ կարող եմ իմ գործը ստեղծել, թեկուզ փոքր, բայց սեփական ընկերություն հիմնել:”

Բարի ընթրիք

«Բարի ընթրիք»-ը բարեգործական, շահույթ չհետապնդող նախագիծ է, որի նպատակը «Այբ» ավագ դպրոցի կրթաթոշակային ծրագրի շահառու աշակերտների ուսման վճարի փոխհատուցումն ապահովելն է: Նախագծի շրջանակում աճուրդը շահած մասնակիցները հանդիպում են որևէ հայտնի գործչի հետ, և ստացված գումարն ամբողջությամբ ուղղվում է «Այբ» ավագ դպրոցում սովորողների կրթաթոշակային ֆոնդին:

2020 թվականին



Վիգեն Առուշանյանը

Հակոբ Հակոբյանը

հանդիպել են աճուրդը շահած մասնակիցների հետ:

Կրթաթոշակ լավագույն շրջանավարտներին

«Այբ»-ի շրջանավարտների կրթաթոշակները հնարավորություն են ընձեռում մեր շրջանավարտներին ուսանելու աշխարհի լավագույն բուհերում:

2020 թվականին կրթաթոշակների բյուջեն կազմել է 195 426 ԱՄՆ դոլար: Կրթաթոշակներ ստացել են Արման Տիգրանյանը, Գևորգ Խանդամիրյանը, Հասմիկ Ավագյանը, Հասմիկ Հակոբյանը, Ժաննա Սարուխանյանը, Տաթևիկ Մարտիրոսյանը և Անի Խաչատրյանը:

Արման Տիգրանյան
Կալիֆոռնիայի Բերկլիի համալսարան

“Այս ընթացքում ես մասնագիտացումս ֆիզիկայից փոխեցի ծրագրավորման, առաջին անգամ ընդունվեցի աշխատանքի և սովորելուն զուգահեռ 3 տարի ծրագրավորող-փորձնակ լինելուց հետո ստացա համակարգչային գիտությունների բակալավրի դիպլոմս 4.0 հնարավորից 3.97 միավորով: Այս 4 տարիների ընթացքում ես շատ բան սովորեցի, ինչպես նաև հասկացա՝ ինչ չգիտեմ, այդ իսկ պատճառով որոշեցի շարունակել ուսումս: Ուրախ եմ տեղեկացնելու, որ հաջողությամբ ընդունվել եմ Լոս Անջելեսի Կալիֆոռնիայի համալսարանի ասպիրանտուրա՝ ամբողջական ֆինանսական աջակցությամբ:”

Էմիլյա Սիմոնյան

Քեմբրիջի համալսարան

“Այս տարի ես սկսել եմ ուսումնասիրել ինձ շատ հետաքրքրող ոլորտ՝ նյարդակենսաբանություն: Հաջորդ տարի մենք հնարավորություն ունենք ուսումնասիրելու մեզ հետաքրքրող գիտական թեմաները: Ես որոշել եմ լաբորատոր հետազոտություններ իրականացնել նյարդաբանության և ուռուցքաբանության ոլորտներում: Ուզում եմ հետազոտել կենդանիների և մարդկանց նեյրոդեգեներատիվ հիվանդությունների նյարդային վնասվածքների և քաղցկեղի բուժման եղանակները: Սա կօգնի ինձ ապագայում մասնագիտանալու կլինիկական նյարդաբանության և ուռուցքաբանության մեջ:”

Հասմիկ Հակոբյան

Լոնդոնի համալսարանական քոլեջ

“Ես հաջողությամբ ավարտեցի Լոնդոնի համալսարանական քոլեջի երկրորդ տարին. դա հիասքանչ էր: Ուսումնասիրել եմ քիմիայի, մաթեմատիկայի և ինֆորմատիկայի հիմքային առարկաները: Այս տարին օգնեց ինձ պատկերացում կազմելու քիմիայում իմ ապագա մասնագիտացման մասին: Ես բարելավել եմ քիմիայի ոլորտում իմ գործնական գիտելիքները, քանի որ շաբաթական 8 ժամ լաբորատոր աշխատանքների դասեր ունեի: Նաև հնարավորություն ունեցա ծանոթանալու լոնդոնյան հայ համայնքի հետ:”

Նվիրաբերություն Արցախին

«Այբ»-ը համախմբված ու համայնքային նախաձեռնությամբ կանգնեց հայրենիքի կողքին՝ դիմագրավելու 2020-ի գլխավոր՝ պատերազմի արհավիրքը: «Այբ» համայնքն իր ընկերների հետ դրամահավաքի շնորհիվ «Հայաստան» համահայկական հիմնադրամին փոխանցեց 125 118 ԱՄՆ դոլար, նաև միացավ կամավորական ու սոցիալական տարբեր նախաձեռնությունների՝ ճակատագրական տարում թեթևացնելու պետության հոգսը:

Մեր աջակիցները

«Այբ»-ի լայնածավալ ծրագրերը հնարավոր է դառնում կյանքի կոչել մեր բարերարների կայուն աջակցությամբ: Շնորհակալ ենք մեր գաղափարները կիսելու, ժամանակն ու ներդրումները կրթությանը նվիրելու և հզոր համայնք ունենալու համար: Մենք միասին ենք այսօր կառուցում մեր երկրի ապագան:

Ռազմավարական հովանավորներ

Արթուր Ջանիբեկյան
Դավիթ Յան
Դավիթ Փախչանյան
Մաթևոս Արամյան
Սերգեյ Համբարձումյան

«Այբ» կրթական հիմնադրամի կանոնադրությամբ, նվիրատվություններով ու ներդրումներով պայմանավորված՝ առանձնացվել է բարերարների երեք խումբ՝ ռազմավարական հովանավոր, շարունակական հովանավոր՝ ֆինանսական միջոցների ներգրավման խոստմամբ, և շարունակական հովանավոր: Այս սկզբունքն է նաև հոգաբարձուների խորհրդի ձևավորման հիմքում:

Շարունակական հովանավորներ՝ ֆինանսական խոստմամբ

Աշոտ Մկրտչյան
Ավետիք Չալաբյան
Արամ Փախչանյան
Արթուր Ալավերդյան
Արթուր Ջանիբեկյան
Արսեն Գալստյան
Արտակ Հովհաննիսյան
Դավիթ Յան
Դավիթ Փախչանյան
Լևոն Ղազարյան
Կարեն Մուսաելյան
«Միկշին» ՍՊԸ,
Տիգրան Հարությունյան
Կարո Սարգսյան
ՀԲԸՄ, Վազգեն Յակուբյան
Մաթևոս Արամյան
Ռուբեն Հարությունյան
Սարգիս Բաղալյան
Սերգեյ Համբարձումյան
Վարդան Բաբիկյան
Վիկտոր Ակուլյան

Շարունակական հովանավորներ

Անահիտ Ադամյան
Աշոտ Մկրտչյան
Ավետիք Չալաբյան
Արամ Արամյան
Արամ Փախչանյան
Արթուր Ալավերդյան
Արթուր Բերդ
Արթուր Ջանիբեկյան
Արմինե Առուստամյան
Արսեն Գալստյան
Արսեն Ղազարյան
Արտակ Հովհաննիսյան
Դավիթ Յան
Դավիթ Փախչանյան
Լևոն Ղազարյան
Կարեն Մուսաելյան
Կարո Սարգսյան
Հակոբ Մոմջյան
Մաթևոս Արամյան
ՀԲԸՄ, Վազգեն Յակուբյան
Մանուկ Հերգնյան
Մարինե Դալլաքյան
Մարտին Մինասյան

2020 թ. հովանավորներ

«Միկշին» ՍՊԸ, Տիգրան
Հարությունյան
Յուլիա Դանիելյան
Ռուբեն Հարությունյան
Ռուբեն Սիմոնյան
Սամվել Դովլաթյան
Սարգիս Բադալյան
Սերգեյ Համբարձումյան
Սիլվա և Եվգենի Յանգ / Յան Ճի
Վահե Ամիրբեկյան
Վարդան Բաբիկյան
Վիկտոր Ակուլյան

Khan Academy, Inc.
«Ազադ» հիմնադրամ
Ազադ Ֆարմասյութիքլզ
Անի Մաթևոսյան
Աննա Հակոբյան
Աշոտ Մկրտչյան
Առնո Մոսիկյան
Ավետիս Գրիգորյան
Արա Չալաբյան
Արամ Փախչանյան
Արգիշտի Ստեփանյան
Արթուր Ալավերդյան
Արթուր Գասպարյան
Արթուր Ջանիբեկյան
Արսեն Գալստյան
Արտակ Հովհաննիսյան
Արփի Թոփչյան
«Բարրի» ՍՊԸ
Գայանե Արամյան
Դավիթ Յան
Դավիթ Փախչանյան
«Զիգզագ» ՍՊԸ
Թալին Սաղդասարյան
Լևոն Խաչատրյան
Լևոն Ղազարյան
Խաչատուր Վանցյան
«Կամոբլոգ» ՍՊԸ
Կարեն Մուսաելյան
Կարո Սարգսյան
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հակոբ Մոմջյան
Հովհաննես Ազնաուրյան
Մանանա Թարփոշյան

Հայ Առաքելական Սուրբ
Եկեղեցու հայորդյաց տներ
Մերի Պետրոսյան
Նազարեթ և Նիլա
Ֆըսթըգճյան Նարեկ
Խաչատրյան
Նելլի Բալայան
Նիկոլայ Բատուրին
Շուշանիկ Բասմաջյան
«Պրոֆխոլոդ» ՍՊԸ
Ռուբեն Հարությունյան
Սամվել Դովլաթյան
Սարգիս Բադալյան
Սերգեյ Համբարձումյան
Սիլվա և Ճի Յանգ
Սոնա Կոշեցյան
Սուրեն Մարաշլյան
Վահագն Արեյան
Վահե Ամիրբեկյան
Վիկտոր Ակուլյան
Տաթևիկ Ադամյան
Տաթևիկ Ավետիսյան
Ռաֆֆի և Նինա Ֆըսթըգճյան
Փիրուզ Սարգսյան
«Վարդանյան ընտանիք»
բարեգործական հիմնադրամ

Մեր աջակիցների ամբողջական ցանկը կարող եք տեսնել կայքում

2020

2020

«Սերունդ առանց սահմանների» մրցույթ (Generation Unlimited Youth Challenge in Armenia)

Կարևորելով համայնքային կամ սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված գաղափարներ ծնելու և կյանքի կոչելու հրամայականը՝ «Այբ» կրթական հիմնադրամը ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ի, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի՝ ՄԱԶԾ-ի, և Դիլիջանի միջազգային դպրոցի (UWC) հետ համագործակցաբար իրականացրեց «Սերունդ առանց սահմանների» (Generation Unlimited, GenU) գաղափարների մրցույթը, որին մասնակցեց 12 թիմ՝ 50 երիտասարդներ Հայաստանի տարբեր մարզերից:

GenU-ի համաշխարհային համագործակցության նպատակը 10-ից 24 տարեկան երեխաների և երիտասարդների համար կրթության, վերապատրաստման և զբաղվածության ընդլայնված հնարավորություններ ստեղծելն էր:

Հայաստանյան մրցույթի հաղթող 5 թիմերը՝ «Խոսք խոսքի», «VR Lab», «CreActive», «Խեցեգործական գյուղ», «Հանուն փոփոխությունների», ստացան 1000-ական ԱՄՆ դոլարի դրամաշնորհ՝ իրենց ծրագրերն իրականացնելու համար:

Եզրափակիչ մրցույթին ներկայացան 36 երկրներ, որոնց շարքում՝ Հայաստանը՝ ***«Խոսք խոսքի» և «Այբ» դպրոցի «VR Lab» թիմերով:***

դիտե՛ք տեսանյութը

Խոսք խոսքի

«Խոսք խոսքի» թիմը ցանկանում էր անել ամեն ինչ՝ լսողական խնդրով երեխաների զարգացման, ներառման, նրանց կրթական, սոցիալական, առողջապահական իրավունքների պաշտպանության համար: Թիմի անդամները համախմբվել էին լսողական խնդիր ունեցող երեխաների խոսքի զարգացման պարապմունքների համար անհրաժեշտ սուրդոմանկավարժական մեթոդական միասնական փաթեթ ստեղծելու, արտադրելու և շրջանառության մեջ դնելու մտքի շուրջ: Շահած գումարն օգնեց նրանց ստեղծելու փաթեթի նախնական տարբերակը:

VR Lab

Համապատասխան քիմիական լաբորատորիաների և սարքավորումների բացակայության պատճառով երեխաները չեն կարողանում տեսական գիտելիքը գործնականորեն ամրապնդել: Որպես խնդրի լուծում թիմն առաջարկում է նորարարական VR (վիրտուալ իրականության) ակնոցներ, որոնց միջոցով երեխաները կկարողանան ճշգրիտ փորձեր կատարել՝ առանց համապատասխան նյութերի և սարքավորումների: Շահած գումարով թիմը ներգրավել է ծրագրավորող և ստեղծել ակնոցի առաջին նախատիպը:

դիտե՛ք տեսանյութը

Կիսաեզրափակիչ անցած թիմեր

դիտե՛ք տեսանյութը

CreActive

CreActive՝ կրեատիվ և ակտիվ: Այսպիսի անվանում են իրենց թիմի համար ընտրել այս խանդավառ ուսանողները և ցանկանում են իրենց ստեղծարարությամբ և ակտիվությամբ վարակել բոլորին: Նպատակ ունեն օգնելու երիտասարդներին, որ դեռևս դպրոցական տարիքից գտնեն սեփական առաքելությունը կյանքում, սահմանեն նպատակ, զարգացնեն անհրաժեշտ հմտություններ և կարողություններ, նպատակը դարձնեն իրականություն: Շահած գումարն օգնեց նրանց ստեղծելու մի հարթակ, որտեղ կհամախմբվեն համալսարանների ամենաակտիվ երիտասարդները:

Հանուն փոփոխությունների

Թիմը համախմբվել է տարեցների, երիտասարդների և հաշմանդամություն ունեցող երեխաների կենսամակարդակը բարելավելու և աշխատանքային գործընթացներում նրանց ներգրավման ու հասարակության մեջ ներառման խնդիրները լուծելու համար:

Թիմը նպատակ ունի Գյումրիում ստեղծելու կենտրոն, որը կապահովի նաև մշտական զբաղվածությամբ և աշխատանքով: Շահած գումարով այն ձեռք է բերել անհրաժեշտ հումք՝ ձեռագործ իրեր ստեղծելու համար:

դիտե՛ք տեսանյութը

դիտե՛ք տեսանյութը

Խեցեգործական գյուղ

Լոռու մարզի Ազնվաձոր համայնքում ցանկանում են ստեղծել կավե տարաների փոքրիկ արտադրամաս, որը համայնքի բնակիչների համար կծառայի որպես ուսումնական և զբաղվածության կենտրոն: Կենտրոնը յուրահատուկ է նրանով, որ տարածաշրջանում լինելու է առաջինը, և երիտասարդները տարաների միջոցով վաճառելու են գյուղում արտադրված գյուղմթերքը: Ծահած գումարով թիմը վերանորոգել է տարածքը, որը բաց է տարածաշրջանի բնակիչների և զբոսաշրջիկների համար, և գնել է խեցեգործության համար անհրաժեշտ պարագաներ:

Տանյա Ռադոչայ

Հայաստանում **ՅՈՒՆԻՍԵՖ**-ի ներկայացուցիչ

«Մենք նախատեսում ենք երիտասարդների հետ նախագծեր մշակել և ստեղծագործել: Երիտասարդներն ուրույն աշխարհայացք ունեն և կարող են այնպիսի լուծումներ առաջարկել, որոնք կօգնեն աշխարհը վերադարձնելու ճիշտ ուղի: Պարզապես մենք պետք է համագործակցության և ստեղծարար մտածելու հնարավորություն ընձեռենք նրանց»:

Դմիտրի Մարիասին

Հայաստանում **ՄԱԿ**-ի **Զարգացման ծրագրի մշտական** ներկայացուցիչ

«GenU-ի միջոցով հույս ունենք ոգեշնչելու հայ երիտասարդներին նոր գաղափարներ ստեղծելու, դրանք կյանքի կոչելու և նպաստելու իրենց համայնքներում նոր հնարավորությունների, ձեռներեցության նախաձեռնությունների և աշխատատեղերի ստեղծմանը»:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՈՒԴԻՏ

Դրամի հոսք	Մուտքեր	Ելքեր
Ընդհանուր և վարչական աշխատանքներ	**72 570 853**	**50 450 867**
«Մենք ենք մեր սահմանները. բոլորս Արցախի համար»	**61 945 499**	**62 307 957**
«Այբ» կրթական հանգույց	**62 217 271**	**56 575 823**
«Այբ» դպրոցի Գ մասնաշենք		4 590 962
«Այբ» դպրոցի աշակերտների կրթաթոշակներ	62 217 271	51 984 861
Մրցույթներ	**47 370 469**	**93 988 597**
«Կենգուրու» մաթեմատիկական մրցույթ	32 546 699	22 456 691
«Ռուսական արջուկ» մրցույթ		11 984 336
Պատանի քիմիկոսների մրցաշար	7 219 700	10 683 331
«Մեղու» մրցույթ	3 184 070	29 370 533
Ռոբոտների համաշխարհային օլիմպիադա	2 100 000	11 591 651
Ուսանող քիմիկոսների մրցաշար	2 320 000	7 902 055
Կրթաթոշակներ աշխարհի լավագույն համալսարանների ուսանողներին	**81 985 621**	**73 028 993**
Էլեկտրոնային ռեսուրսների թարգմանության և ստեղծման նախագիծ	**27 576 663**	**33 350 914**
Այլ ծրագրեր	**77 719 703**	**82 417 079**
Գիտության և տեխնոլոգիաների ծրագիր (FAST)	29 044 145	28 817 246
ԱԲ-ի քննություններ	48 675 558	53 599 833
Ընդամենը	**431 380 293**	**452 120 230**

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010
Վ.Սարգսյանի փ. 26/1
«Էրեբունի Պլազա» բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 595 999
Վեբ կայք www.kpmg.am

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցված, զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտի ընթացքում միշտ կհայտնաբերվի էական խեղաթյուրումը՝ վերջինիս առկայության դեպքում: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Մենք նաև՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու համար և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:

- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ հանգամանքները հետ կապված, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մեզանից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդ բացահայտումները բավարա չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Հիմնադրամի կողմից անընդհատության հիմունքով գործունեության իրականացման դադարեցմանը:

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները և գնահատում ենք, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են իրենց հիմքում ընկած գործառնություններն ու իրադարձություններն այնպիսի ձևով, որը թույլ է տալիս ապահովել ճշմարիտ ներկայացում:

«Այբ» կրթական հիմնադրամ
Անկախ աուդիտորական եզրակացություն
Էջ 2

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Այբ» կրթական հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Այբ» կրթական հիմնադրամի («Հիմնադրամ») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2020թ. և այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, Հիմնադրամի միջոցների մնացորդում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերը և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ ներկայացված է մեր եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամի՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (*ՀԷՄՍԽ կանոնագիրք)* և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և կատարել ենք էթիկային վերաբերող մեր այլ պարտականություններն այս պահանջներին և ՀԷՄՍԽ կանոնագրքին համապատասխան: Մենք գտնում ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու՝ կարողության գնահատման համար՝ անհարժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե առկա չէ ղեկավարության՝ Հիմնադրամը լուծարելու կամ գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չկա դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով ստիպողական մասնավոր անձնական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման հիմք հանդիսացող աուդիտի իրականացման համար պատասխանատու գործընկերն է՝

Տիգրան Գասպարյան
Ղեկավար գործընկեր, «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի տնօրեն

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
30 հունիսի 2021թ.

2020-ին «Այբ» կրթական հիմնադրամը

Արարատյան բակալավրիատի միջազգային ճանաչման և քննական գործընթացի համար փոխանցել է
48 675 558 դրամ

«Այբ»-ի մրցույթների հասանելիության և ապահովման նպատակով ծախսել է
93 988 597 դրամ

Առցանց անվճար կրթության ապահովմանն է ուղղել
27 576 663 դրամ

Աշխարհի լավագույն համալսարաններում սովորելուն է ուղղել
73 028 993 դրամ

«Այբ» դպրոցին որպես աջակցության փոխանցել է
56 575 823 դրամ

Վարչական աշխատանքներին է ուղղվել ֆինանսական միջոցների **11%**-ը

Հիմնադրամների համար այս ցուցանիշը ողջ աշխարհում կազմում է **15-40%**, իսկ մինչև **20%**-ը համարվում է լավագույն ցուցանիշ:

«ԱՅԲ» ԴՊՐՈՑ

2020-2021 *ուսումնական տարին «Այբ» դպրոցը մեկնարկեց* ***479*** *աշակերտով:*

«Այբ» դպրոցը շարունակում է հավատարիմ մնալ իր առաքելությանը՝ 21-րդ դարի պահանջներին բավարարող կրթությամբ ապահովելով իր աշակերտներին և նրանց համար լինելով ամենահաստատուն հենարանը, որ կուռ գիտելիքներով և արժեհամակարգով մտնեն մեծ կյանք:

«Այբ» ավագ դպրոցի աշակերտների **86%**-ը ստացել է կրթաթոշակ (ուսման վարձի փոխհատուցում):



27 աշակերտ ստացել է կրթաթոշակ ամբողջ ուսման վարձի չափով

73 աշակերտ՝ ուսման վարձի մինչև **82%**-ի չափով

12 աշակերտ՝ ուսման վարձի մինչև **96%**-ի չափով

29 աշակերտ՝ ուսման վարձի մինչև **30%**-ի չափով

Ավարտական հանդիսություն 2020

«Այբ»-ի մեծ ընտանիքը համալրվեց **70** պայծառ շրջանավարտներով, որոնք ընդգրկվեցին նաև մենտորության ծրագրում և ստացան հավաստագրեր:

*«Այբ» դպրոցն այժմ ունի **370** շրջանավարտ*

Հաղթահարելով 2020-ի գլխավոր մարտահրավերը

Նոր կորոնավիրուսի համավարակի ստեղծած արտակարգ դրության առաջին օրից «Այբ» դպրոցը հաջողությամբ գործարկեց հեռավար ուսուցումը: Դպրոցի ուսուցիչներն ու աշակերտները կրթական գործընթացը շարունակեցին Microsoft Teams հարթակում, որում աշխատելու փորձ նախկինում ունեցել էին: **«Այբ»-ը մշտապես եղել է կրթական նորարարությունների և նոր մեթոդների փորձարկման ջատագով ու իրականացնող, ինչպես նաև պատրաստակամ է կիսելու իր փորձը՝ ներդրում ունենալով հայկական կրթական համակարգի բարելավման գործում:** Ստեղծված արտակարգ իրավիճակում «Այբ» դպրոցը ձեռնարկեց հեռավար ուսուցման մասին վեբինարների շարք: Դրանք տևեցին ավելի քան մեկ ամիս և անցկացվեցին ուսուցիչների ու աշակերտների կողմից:

«Այբ»-ը՝ հայրենիքի կողքին

«Այբ»-ի ամանորյա ցուցահանդես-տոնավաճառն այս տարի կայացավ յուրահատուկ ձևաչափով. «Այբ» դպրոցի շրջանավարտները կազմակերպեցին առցանց աճուրդ, որը մշտապես տոնավաճառի անբաժան մասն է կազմել: Այս տարվա աճուրդը մի փոքր այլ իմաստ ուներ. այն բարեգործական էր և նպատակ ուներ օգնելու մեր վիրավոր զինվորներին: **Նախաձեռնության արդյունքում հավաքված ողջ գումարը փոխանցվեց Հայրենիքի պաշտպանի վերականգնողական կենտրոնին:** Ընդհանուր 6 օր տևած աճուրդի ընթացքում դպրոցը կարողացավ հավաքել **292 000** ՀՀ դրամ՝ վաճառելով ներկայացված իրերի մեծամասնությունը:

«Այբ»-ի տարբեր տարիների տասնյակ շրջանավարտներ և աշխատակիցներ մասնակցեցին մարտական գործողություններին: Արցախյան երկրորդ պատերազմում հերոսաբար զոհվեց «Այբ»-ի 2020 թվականի շրջանավարտ Լևոն Հովսեփյանը. նա պատերազմից երկու ամիս առաջ էր անցել ծառայության:

Տարվա իրադարձությունները

«Այբ» դպրոցի հոգաբարձուների խորհուրդը «Այբ» դպրոցի գործադիր տնօրեն ընտրեց ***Դավիթ Սահակյանին:***

«Այբ» դպրոցում տեղի ունեցավ «Լորիկ» ֆիլմի բացառիկ ցուցադրությունը: Ֆիլմի պրոդյուսերն «Այբ»-ի բարերար ու բարեկամ Մարտիրոս Մինասյանն է, որի կարծիքով՝ թեև ֆիլմում ներկայացված են հայ հասարակության սոցիալական, քաղաքական ու կենցաղային խնդիրները, բայց այն ֆիլմ է ոչ միայն հայերի, այլև բոլորի համար ու բոլորի մասին:

«Այբ» դպրոցը ներկայացնող «VR Lab» թիմը դարձավ «Սերունդ առանց սահմանների» մրցույթի երկրորդ փուլի հաղթող: Մրցույթի երկրորդ փուլ էր անցել նաև «Խոսք խոսքի» թիմը, որի կազմում է «Այբ»-ի շրջանավարտ Մարիամ Ղազարյանը:

Տարվա հյուրերը

Դպրոցն առցանց հյուրընկալեց քարտեզագիր Ռուբեն Գալչյանին, վերլուծաբան Արեգ Քոչինյանին, նորաձևության հայտնի պրոֆեսոր Ջովանի Օտոնելոյին, ֆիզիկոս Գարիկ Իսրայելյանին:

Ռուբեն Գալչյան

Արեգ Քոչինյան

Ջովանի Օտոնելո

Գարիկ Իսրայելյան

Տարվա ձեռքբերումները

«Այբ» դպրոցի աշակերտներ
Էթերի Սարգսյանը, Սուրեն Թադևոսյանը, Մերուժան Խաչատրյանը, Անի Հարությունյանը
դարձան հանրապետական առարկայական օլիմպիադայի եզրափակիչ փուլերի հաղթողներ և արժանացան անհատական կրթաթոշակի:

ԴԻԼԻՋԱՆԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Դիլիջանի կենտրոնական դպրոցը «Այբ» համակարգի դպրոց է

Դիլիջանի կենտրոնական դպրոցը մեր առաջին նախագիծն է արտաքին պատվերով. այն ստեղծվել է հիմնադրամի կողմից՝ ՀՀ Կենտրոնական բանկի հետ համագործակցության արդյունքում:

2020-ին Դիլիջանի կենտրոնական դպրոց հաճախել է **144** աշակերտ:



5 աշակերտ Իջևանից

86 աշակերտ Դիլիջանից

53 աշակերտ *Երևանից ԿԲ աշխատակիցների երեխաներ, ովքեր տեղափոխվել են բնակության Դիլիջան*

2019-20 ուստարում ԴԿԴ-ի 7 շրջանավարտ ընդունվել է «Այբ» ավագ դպրոցի 10-րդ դասարան:

Դիլիջանի
կենտրոնական դպրոց

Դիլիջանի կենտրոնական դպրոցը՝ հայրենիքի կողքին

Պատերազմական իրավիճակում հայտնված մեր հայրենիքին օգնելու պատրաստակամությամբ՝ դպրոցի ուսուցիչները հանդես եկան «Նվիրաբերի՛ր գումար և զարգացրո՛ւ գիտելիքներդ» խորագրով նախաձեռնությամբ: **Ուսուցիչները պատրաստեցին հետաքրքրաշարժ ուսուցողական դասընթացների շարք՝ բազմազան թեմաներով, նախատեսված ոչ միայն դպրոցականների, այլև մեծահասակների համար, իսկ ստացված հասույթն ամբողջությամբ՝ 217 000 ՀՀ դրամ, փոխանցվեց «Հայաստան» համահայկական հիմնադրամին:** Մասնակիցների արձագանքը դասընթացներին շատ դրական էր, և նրանցից շատերը ցանկություն հայտնեցին ապահովելու դրանց շարունակականությունը: Հաշվի առնելով այս հանգամանքը, ինչպես նաև կարևորելով նախաձեռնության բարեգործական նպատակը՝ դպրոցի ուսուցիչները կմշակեն դասընթացների նոր շարք՝ հօգուտ մեր երկրի բարօրության և մեր աշակերտների գիտելիքների հարստացման:

Դիլիջանի կենտրոնական դպրոցը 2020-ին

ԴԿԴ-ի աշխատակիցներն ու աշակերտները մեծ խանդավառությամբ էին նախապատրաստվել Տյառնընդառաջի տոնին: Տոնը նշվեց Դիլիջանի եկեղեցու բակում, ուրախ երգ ու պարով, դպրոցի կազմակերպած հյուրասիրությամբ:

ԴԿԴ-ի 3-րդ և 4-րդ դասարանցիները «ռուսերեն» առարկայի շրջանակում նախաձեռնել էին **միջոցառում «Масленица» տոնի առթիվ:** Երեխաները չհասցրին կենդանի կերպով ներկայացնել այն: Փոխարենը միջոցառումը հասանելի դարձավ որպես ֆիլմ:

դիտե՛ք տեսանյութը

Հունվարի 24-ը նշվում է որպես Կրթության միջազգային օր: Դիլիջանի կենտրոնական դպրոցի սաների մասնակցությամբ ստեղծվեց տեսաֆիլմ՝ նվիրված կրթության միջազգային տոնին:

դիտե՛ք տեսանյութը

Երեխաների պաշտպանության միջազգային օրը՝ **հունիսի 1-ը,** իսկական տոն դարձավ ԴԿԴ-ի՝ մեկուսացման մեջ գտնվող աշակերտների համար:

դիտե՛ք տեսանյութը

ԴԿԴ-ի **7-րդ սերնդի** շրջանավարտներին հրաժեշտ տվեցին յուրահատուկ կերպով:

դիտե՛ք տեսանյութը

Տարվա իրադարձությունները

Փետրվարի 20-ին ԴԿԴ-ում արդեն երրորդ անգամ կազմակերպվեց ծրագրավորման համայնքային մրցույթը՝ նվիրված Աշոտ Հովհաննիսյանի հիշատակին: Մասնակցում էր 20 աշակերտ Դիլիջան համայնքի դպրոցներից:
Մրցույթի նպատակն է զարգացնել Դիլիջան համայնքում համակարգչային և տեխնոլոգիական կրթությունը:

Փետրվարի 13-ին Դիլիջանի կենտրոնական դպրոցում կայացավ ուսուցիչների վերապատրաստման հերթական սեմինարը: Թեման էր՝ «Սովորողի վարքագծի կառավարման ժամանակակից մոտեցումները»:

ԴԿԴ-ի 9-րդ դասարանցիները Հայոց ցեղասպանության վերաբերյալ իրականացրին երկու նախագիծ: Նախագծերից մեկում սովորողները պատմում էին իրենց ծնողներից ու տատիկ-պապիկներից լսած պատմությունները ցեղասպանության մասին: Մյուսը, որ ԴԿԴ-ի և «Այբ» դպրոցի երկու աշակերտների համագործակցային աշխատանք էր, Մեծ եղեռնի թեմայով հարցազրույց էր դասավանդող ուսուցիչների հետ:

Տարվա ձեռքբերումները

Դիլիջանի կենտրոնական դպրոցի սաներն ակտիվ մասնակցեցին դպրոցական օլիմպիադաներին:
5-րդ դասարանի աշակերտ Արսեն Մելքոնյանը մաթեմատիկայի օլիմպիադայի հանրապետական փուլում արժանացավ 3-րդ կարգի դիպլոմի: Հայաստանի Write On 2020 մրցույթի հանրապետական փուլի հաղթողների թվում կան նաև ԴԿԴ-ն ներկայացնող աշակերտներ:

6-րդ դասարան
1-ին տեղ - Մանե Ստեփանյան
7-րդ դասարան
3-րդ տեղ - Վահագն Ալոյան
9-րդ դասարան
3-րդ տեղ - Լիլիթ Կակոյան

ՀԱՆՐԱՅԻՆ
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական հարթակներում



Մեդիայում

- **90** **դրական հրապարակում** (ներառյալ հեռուստատեսայինը)
- **6** **տեսաֆիլմ**
- **մամուլի 12 հաղորդագրություն**

Համայնքում

- **տարեկան եռալեզու հաշվետվություն (տեսանյութ և առցանց)**
- **10** **ամսական տեղեկագիր**
- **100**-ից ավելի **հաջողության պատմություն**

ԱՇԽԱՏՈՒՄ ԵՆՔ ԹԻՄՈՎ ՈՒ ՍԻՐՈՎ

«Այբ» կրթական հիմնադրամի նպատակները կյանքի են կոչվում նրա նպատակասլաց թիմի ջանքերի շնորհիվ: Մենք ձգտում ենք հավատարիմ լինել «Այբ»-ի առաքելությանը՝ լավագույն կրթության հնարավորություններ ընձեռել երեխաներին և խթանել որակի մշակույթը Հայաստանում:

Եվ թեև 2020 թվականին «Այբ»-ի թիմն անցավ հեռավար աշխատանքի, կորպորատիվ մշակույթի նոր պայմաններում իրականացվող նախագծերից ոչ մեկը չդադարեց, այլ իրականացվեց

ստեղծված արտակարգ իրավիճակում և տեխնոլոգիական նոր լուծումների միջոցով:
2020-ին դրվեցին մի շարք նոր ու լայնածավալ նախաձեռնությունների հիմքերը, որոնք դարձնելու են 2021-ը ակտիվ կրթական գործընթացների տարի:

Հայացք դեպի 2021

«Այբ»-ը ՀՀ բոլոր մարզերում անցկացնում է «Կյանքի հիմնարար հմտություններ» խորագրով դասընթացներ: «ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստանի» հետ համատեղ:

«Այբ»-ը ԵՄ Արևելյան գործընկերության երկրների համար COVID-19-ի հետևանքների չեզոքացման աջակցության ծրագրի շրջանակում «Մարդը կարիքի մեջ» (“People In Need”) բարեգործական ՀԿ-ի կողմից ստացել է դրամաշնորհ, որի շնորհիվ «Քան» ակադեմիան ապահովելու է հայալեզու բարձրորակ անվճար կրթություն Շիրակի, Լոռու և Կոտայքի մարզերի աշակերտների և ուսուցիչների համար:

«Այբ»-ը դառնում է մարդկային ներուժի բացահայտմանը, զարգացմանը և կիրառմանն ուղղված «Mission: Talent» նախագծի անցկացման գործընկերներից մեկը: Նախագծի կազմակերպիչը Ռոստոմի կորպորատիվ ակադեմիան է, որի հետ ստորագրվել է համագործակցության հուշագիր, ըստ որի՝ «Այբ»-ը պատրաստվում է ուսուցիչների և դպրոցների ղեկավար կազմի զարգացման իր փորձը ներդնել Ռուսաստանի Դաշնությունում:

«Այբ» կրթական հիմնադրամը, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի ֆինանսավորմամբ, «Ի-Վի Քոնսալթինգ» գործարար խորհրդատվական ընկերության և «ADWISE բիզնես և իրավաբանական խորհրդատվություն» ընկերության հետ իրականացնում է խորհրդատվական ծառայություններ ՀՀ ԱԺ ԿԳՄՍԵՍ հարցերի մշտական հանձնաժողովի համար: Խորհրդատվության թեմաները հետևյալն են.

- *Միջնակարգ կրթության ուսումնական հաստատություններում ուսուցիչ աշխատելու իրավունք տալու և թափուր տեղը համալրելու ընթացակարգերի բարելավման արդյունավետ տարբերակները.*
- *Հեռավար կրթություն՝ որպես երկրի զարգացումը, շարունակական կրթությունը և սոցիալականացումը պահպանելու միջոց.*
- *Ոչ ֆորմալ կրթության, ներառյալ արտադպրոցական դաստիարակության ոլորտի հիմնախնդիրները և օրենսդրական կարգավորման առաջնահերթությունները.*
- *«Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ 2002 թ. նոյեմբերի 20-ի ՀՕ-465-Ն օրենքի և դրանից բխող իրավահարաբերությունների համապատասխանեցում միջազգային պարտավորություններին և ժամանակակից հիմնախնդիրների կարգավորումներին:*

ԵՀ-Համաշխարհային բանկի դրամաշնորհային ծրագրով «Այբ» կրթական հիմնադրամը ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ իրականացնում է Տավուշի մարզի բոլոր 80 դպրոցների 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարանների բնագիտամաթեմատիկական առարկաների ուսուցիչների և դպրոցների ղեկավար կազմի վերապատրաստում՝ «ԵՄ-ն հանուն նորարարության» նախաձեռնության փորձնական ծրագրի աշխատանքների՝ ուսուցիչների վերապատրաստման բաղադրիչի շրջանակում: Այս ծրագիրը կարևոր է նրանով, որ «Այբ»-ը Արարատյան բակալավրիատի իր փորձի հիման վրա կստեղծի ուսուցման մոդել, որը հետագայում կկիրառվի ամբողջ երկրում:

«Այբ»-ի կրթական ծրագրերը 2021-ին շարունակվելու են՝ առաջնահերթություն տալով նախագծային կրթության ներդրմանը Հայաստանի Հանրապետության մարզերում և Արցախում, ինչպես նաև ներդնելով ջանքեր՝ հայկական սփյուռքի համար կրթական հնարավորություններ ստեղծելու նպատակով:

Բարեգործությունն «Այբ»-ի ծրագրերի համար նշանակում է ներդրում Հայաստանի ապագայի մեջ: Անգամ ամենափոքր նվիրատվությունը կարող է մեծ արժեքի վերածվել: Նվիրաբերի՛ր մեր կրթական ծրագրերին, տո՛ւր լավագույն ապագայի հնարավորություն մեր երեխաներին ու երկրին:

Donate.ayb.am

Նվիրի՛ր ապագա

«Այբ» կրթական հիմնադրամ
Հայաստան, 0037 Երևան,
Ազատության պողոտա 1/21-1

+374 77 010 863

+374 60 701 707

info@ayb.am

ayb.am